ցած ու ապշած էր մնացել իւր տեսած այս հաղուագիւտ և տարօրինակ դէպքի վրայ և տարակուսած հարցնում է ինձնից. «Տէր-տէր Ջան, ախր ի՞նչ ասացիր և ի՞նչ պիտի գրէիր մի կտոր թղթի վրայ, որ արիւնարբու Թուրքերը վախից սարսափած՝ այնպէս շուտով կորան-գնացին իրենց տները»։—Նրանց ազգանունները միայն հարցրի, որ գրեմ և յայտնեմ իշխանութեան, բայց նրանք լեղապատառ փախան-գնացին մեր գիւղից։—Ա՜խ, Տէրտէր Ջան, ախր մենք Հայերս լեզու չգիտենք, տէրութեան կարգն ու կանոնը և օրէնքները չգիտենք, թուով 15—20 անգամ աւելի քիչ ենք Թուրքերից։ Նրանք ոտքից գլուխ զինուած են կատարելագործուած նորագոյն զէնքերով, այն ինչ՝ մեր Հայերից շատերը չախմախլու ժանգոտած հրացան անգամ չունին։ Բացի դրանից, մեր Հայ և Թուրք երկրագործ գիւղացիք մեր հարևան Թուրք բէկերից պարտք են առնում, սարսափելի նեղութեան ժամանակ մի 10—15 ռուբլի։ Եւ այդ չնչին գումարը մի քանի տարուց յետոյ հասնում է 60—70—100 ռուբ. այնուհետև այդ պարտքը հետզհետէ աճում է արագաբաղ և այնպիսի անադէն գումար է դառնում, որի տոկոսն անգամ գիւղացին չէ կարողանում վճարել մինչև իւր մահը։ Այսպիսի անյայտ և աննպաստ պայմանների մէջ լինելով, ասա՛ ինձ, որդի Ջան, կարգիդ մեռնեմ, մենք՝ Հայերս արդեօք կարո՞ղ ենք դիմադրել Թուրքերին և նրանց անիրաւ ու անարդար պահանջները չկատարել, երբ մեր նեղութիւնները իշխանութեան